ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 փետրվարի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

11
(2861)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԱՎԱՍԱՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆԸ ԿՐԿԻՆ ԱՐԴԱՐԱՑՎԵԼ Է

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում փաստաբան Արմինե Ֆանյանը հայտնեց, որ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը կրկին արդարացվել է: Ըստ փաստաբանի՝ Գլխավոր դատախազությունը բոլոր ատյանները դիմել է, բայց դատարանի որոշմամբ Սրբազանն արդարացվել է:

2023 թվականին գրել էինք, որ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը կրկին մեղադրյալի կարգավիճակ ունի. վերադաս դատախազը վերացրել է քննիչի՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը:

Պարզվել է, որ գործը վերաբացվել է՝ գործարար Փայլակ Հայրապետյանի դիմումի հիման վրա:

Ըստ գործարարի. «ՀՀ քաղաքացի Ս. Կ.-ն 2010 թվականի հուլիսի 15-ին ձեռք է բերել Կիպրոսի Հանրապետությունում հիմնադրված «WLISPERA HOLDINGS LIMITED» կազմակերպության բաժնետոմսերը եւ նշված ընկերությունը կառավարելու իրավասությունը հանձնել իր սանիկ, «Զորագյուղ» արտադրական կոոպերատիվի հիմնադիր-տնօրեն Ա. Ս.-ին (խոսքը Աշոտ Սուքիասյանի մասին է -խմբ.)՝ այդպիսով օժանդակելով հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով եկամուտներն օրինականացնելուն: Քրեական վարույթով պարզվել է, որ «Զորագյուղ» արտադրական կոոպերատիվի եւ բանկերից մեկի միջեւ կնքված պայմանագրով Ա. Ս.-ն բանկից ստացել է 3 մլրդ 664 մլն 175 հազար դրամին համարժեք 9 մլն ԱՄՆ դոլար եւ 361 մլն 500 հազար դրամի վարկի գումարներ՝ նպատակ չունենալով ստացած վարկային միջոցները հետագայում վերադարձնել:

Խաբեությամբ ձեռք բերված գույքային իրավունքներից ստացված եկամուտներն օրինականացնելու, ծագման աղբյուրը, տեղաշարժն ու պատկանելիությունը թաքցնելու եւ խեղաթյուրելու նպատակով Ա. Ս.-ն կատարել է մի շարք բանկային եւ առեւտրային գործարքներ, մասնավորապես՝ «Զորագյուղ» արտադրական կոոպերատիվի անվամբ բացված դոլարային հաշվից Կիպրոսի Հանրապետության «HELLENIC BANK PUBLIK COMPANY LTD» բանկում բացված, իրեն եւ Ս. Կ.-ին պատկանող «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերությանը փոխանցել է հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի՝ 131 մլն 950 հազար դրամին համարժեք 350 հազար ԱՄՆ դոլարի եկամուտ, որին միախառնել է նույն բանկում իրեն պատկանող 2 այլ ընկերության հաշվեհամարներից փոխանցված, հանցավոր նույն եղանակով ստացված գումարները: Փոխարենը տվյալ ընկերությունը «Զորագյուղ» արտադրական կոոպերատիվի դոլարային հաշիվներին փոխանցել է 1 մլն 707 հազար 32,3 ԱՄՆ դոլար»:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում փաստաբան Արմինե Ֆանյանը մանրամասներ ներկայացրեց, թե ինչ ճանապարհ են անցել, եւ ինչպես է Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանն արդարացվել:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

Երեկ ArmLur.am-ը գրել էր, որ խուզարկություններ են իրականացվել էկոնոմիկայի նախարարության գնումների վարչության աշխատակիցների եւ ղեկավարների բնակարաններում, ինչպես նաեւ խուզարկել են փոխնախարար Անի Իսպիրյանի բնակարանը: Ըստ մամուլում շրջանառվող տեղեկությունների՝ վերջինս նաեւ ձերբակալվել է: Ձերբակալվել է նաեւ էկոնոմիկայի նախարարության հանրային ներդրումների վարչության պետը: «Ժողովուրդ» օրաթերթը, ուսումնասիրելով էկոնոմիկայի նախարարության 2024 թվականի գնումները, նկատեց, որ հունվարի 26-ին նախարարությունը Վարդան Կոստանյանին փոխանցել է 40 մլն 54 հազար դրամ, իսկ գնման առարկայի անվանումը Կոստանյանի պաշտոնն է՝ առեւտրական կցորդ Իրանի Իսլամական Հանրապետությունում: Վարդան Կոստանյանը 2021 թվականի հուլիսի 1-ից նշանակվել է Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության առեւտրական կցորդ՝ 3 տարի ժամկետով: Բանն այն է, որ Կոստանյանի պաշտոնավարման ժամկետը հուլիսի 1-ին լրանալու է, իսկ հատկացումն արված է մինչեւ դեկտեմբերի 31-ը: Ներկայացնենք, թե ինչի համար է նախատեսված 40 մլն դրամը կամ գրեթե 99 հազար ԱՄՆ դոլարը, որը տրամադրվել էր ՀՀ պետբյուջեից: Այսպիսով, նշված գումարից 15 մլն դրամը Կոստանյանի վարձատրությունն է, 6 մլն դրամը բնակարանի վարձակալության եւ յուրաքանչյուր երեխայի համար տրվող հավելավճարն է: 18 մլն 572 հազար դրամը նախատեսվել է պահպանման այլ ծախսերի համար, որը ներառում է տրանսպորտի ապահովագրություն եւ պահպանում, գույքի եւ տեխնիկայի ապահովագրություն, գործուղման ծախսեր եւ այլն: Ինչ կապ ունի այս հատկացումը իրավապահների բացահայտումների հետ՝ ցույց կտա ժամանակը, բայց փաստ է, որ խոշոր ծախսերից մեկն այս ամիս էկոնոմիկայի նախարարությունում դա է եղել:



ՔՊ-ական պատգամավորները մտադիր են պարբերաբար տարբեր նախարարների ու պաշտոնյաների կանչել խորհրդարան՝ փակ հանդիպումների: Ընդ որում՝ առաջնային այն նախարարներն ու պաշտոնյաներն են կանչվելու ԱԺ, որոնց աշխատանքից Փաշինյանը դժգոհ է, կամ որոնք հաճախ են աչքի ընկնում աղմկահարույց միջադեպերով: Միեւնույն ժամանակ ուշագրավ է, որ պաշտոնյաներին ու նախարարներին խորհրդարան կանչելու նախաձեռնությունը ոչ թե Փաշինյանինն է, այլ պատգամավորներինը, մասնավորապես՝ ՔՊ խմբակցության վերնախավինը: Հավանաբար, օրենսդիրներն այսպիսով մտադիր են խորհրդարանի վերահսկողությունը մեծացնել այլ կառույցների վրա: Խորհրդարան ասելով՝ նրանք նկատի ունեն ՔՊ-ն: Իսկ ՔՊ-ն էլ թիրախավորում է միայն այն պաշտոնյաներին, որոնց հետ Նիկոլ Փաշինյանը լարված է:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Տիրան Խաչատրյանի մասնակցությամբ տեղի ունեցած միջադեպի քրեական գործը ավարտական փուլին է մոտենում, ասել է թե՝ նախաքննական մարմինը առաջիկայում նախաքննության ավարտ կհայտարարի: Հիշեցնենք, որ կրակոցներ էին հնչել Կոտայքի մարզում գտնվող «Էրիկի մոտ» ռեստորանում, ինչի հետեւանքով Զինված ուժերի գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Տիրան Խաչատրյանը եւ Նորայր Սաֆարյանը կալանավորված են: Գրել էինք, որ այս գործով մեղադրանք է առաջադրվել ԼՂՀ պաշտպանության նախարարի նախկին տեղակալ, գնդապետ Գարրի Սաֆարյանի որդուն՝ Ակսեն Սաֆարյանին: Հավելենք, որ ԼՂՀ պաշտպանության նախարարի նախկին տեղակալ, գնդապետ Գարրի Սաֆարյանին եւ նրա տիկնոջը՝ Ռիտա Բաղդասարյանին, հրավիրել են Գլխավոր դատախազություն: Նրանք ծանուցագիր էին ստացել, որ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում իրենց պատկանող գույքի առնչությամբ իրականացվում է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր: Ծանուցագիրը ստանալու պահից՝ մեկ ամսվա ընթացքում, պետք է ներկայանալ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն՝ ծանոթանալու գործի նյութերին, ներկայացնելու դիրքորոշում, ինչպես նաեւ հայտարարագիր: Բանն այն է, որ «Վերածնունդ» ՍՊԸ-ն ներառված է եղել Ստեփանակերտում բարեկարգման աշխատանք իրականացնող ընկերությունների թվում. այն 2020թ.-ի դրությամբ 263 մլն 981 հազար դրամի աշխատանքներ է իրականացրել: Ընկերության 50.3 տոկոսը պատկանում է գնդապետ Գարրի Սաֆարյանին, 49.7 տոկոսը՝ նրա կնոջը՝ Ռիտա Բաղդասարյանին: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների եւ փոխկապակցված անձանց հայտարարագրերում Սաֆարյան Գարրին եւ Բաղդասարյան Ռիտան 2013-2017 թվականներին, աշխատավարձից բացի, այլ եկամուտ չեն ներկայացրել: Թե ինչ գույքերի առնչվող հարցերով են նրանք հրավիրվել Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն, բաց աղբյուրում նշված չէ:

ԶՐՈՒՅՑ

«ԲԱՔՎԻՑ ՈՉ ՄԻ ՆՈՐ ԲԱՆ ՉԻ ԼՍՎԵԼ». Մ. ԿՈԼԵՐՈՎ

Վերջին շրջանում Հայաստանում իշխանությունները նախատեսում են Սահմանադրական փոփոխություններ, այս ընթացքում Ադրբեջանի նախագահը հոխորտում է, որ հայկական քաղաքները ադրբեջանական են: ArmLur.am-ը զրուցել է ռուս քաղաքագետ Մոդեստ Կոլերովի հետ Սահմանադրական սպասվելիք փոփոխությունների, Ալիեւի հայտարարությունների եւ Արցախի նախկին ղեկավարների գերության մասին:

-Պարոն Կոլերով, Ադրբեջանի նախագահն իր վերջին հարցազրույցում բազմիցս հիշատակել է հայկական որոշ քաղաքներ՝ ասելով, որ դրանք ադրբեջանական են: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում այս հայտարարությունը հայերի համար:

-Բաքվից ոչ մի նոր բան չի լսվել. ինքը՝ Երեւանը, ժամանակին կոչվել է ադրբեջանական: Սա նշանակում է, որ Բաքվի էքսպանսիան Հայաստանում շարունակվելու է՝ անկախ ամեն ինչից:

-Հայաստանը փորձում է քայլեր ձեռնարկել բանտարկյալներին եւ Արցախի նախկին նախագահներին վերադարձնելու ուղղությամբ, սակայն փորձերն արդյունք չեն տալիս: Ի՞նչ պետք է անի Հայաստանը նրանց վերադարձնելու համար:

-Հայաստանը սկզբում չպետք է թույլ տար նրանց առեւանգումը: Այժմ համարժեք փոխանակումը կամ նրանց վերադարձը հնարավոր է միայն ցանկացած բանակցությունների նախապայմանով:

-Վերջերս հրապարակվեցին Արցախի նախագահների լուսանկարները Բաքվի բանտից: Նրանք կարծես ժպտում են, բայց միայն նկարներում: Սա Ադրբեջանի քարոզչամեքենան էր. ինչպե՞ս կմեկնաբանեք այս քայլը:

-Իմ տեղեկություններով՝ ոչ բոլոր գերեվարված արցախցիներն են լավ պայմաններում պահվում:

-Հայաստանի կառավարությունը ցանկանում է փոխել ՀՀ Սահմանադրությունը. ի՞նչ եք կարծում, ո՞րն է պատճառը, որ Փաշինյանը ցանկանում է փոխել այն:

-Փաշինյանը ցանկանում է հավերժ կառավարել իշխանությանը հավերժ տիրելու համար:

-Մենք խոսում ենք տարածաշրջանում խաղաղության մասին, բայց այսօր Հայաստանի եւ Ադրբեջանի ներկայացուցիչները քննարկում են սահմանագծման հարցը: Ըստ Ձեզ՝ ի՞նչ սահմանազատման մասին կարող է խոսք լինել: Ինչպիսի՞ խաղաղության մասին կարող է խոսք լինել, երբ Ադրբեջանն իր հայացքն ուղղել է Հայաստանի ինքնիշխան տարածքին:

-Խաղաղությունը սկզբունքորեն չի կարող գոյություն ունենալ առանց սահմանազատման: Դեռեւս սահմանազատում չի եղել: Հայաստանում անկայունության հիմնական գործոնը հայ բնակչության փախուստն է Սյունիքից (Զանգեզուր):

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ԱՆՅՈՒԴԱՐՁ

ՉԻ ԿԱՐՈՂ ԱՄՈՐՖ ԼԻՆԵԼ

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի կարծիքով՝ Հայաստանի Հանրապետությունը իր Սահմանադրության մեջ եւ այլ փաստաթղթերում ի սկզբանե ունեցել է եւ ունի դրույթներ, որոնք պետք է վերանայվեն՝ հաշվի առնելով աշխարհաքաղաքական բոլոր փոփոխությունները եւ իրադարձությունները:

Այս մասին ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն ասաց՝ պատասխանելով հարցին, թե արդյոք իշխանությունը մտածում է Սահմանադրությունից Անկախության հռչակագրին հղումը հանելու ուղղությամբ, որտեղ խոսք կա Լեռնային Ղարաբաղի մասին:

«Մենք պետք է հասկանանք, թե Հայաստանն ուր է գնում եւ ինչ նպատակներ է հետապնդում, ինչի համար է Հայաստանի Հանրապետության գոյությունը: Արդյոք այդ գոյությունը նրա՞մ համար է, որպեսզի մենք վերականգնենք պատմական Մեծ Հայքը, Փոքր Հայքը, թե՞ դա սեպտեմբերի 21-ի մասին է, երբ մենք ստացանք անկախություն, թե՞ դա Հայաստանի Հանրապետության քաղաքացու մասին է, որը պետք է լինի ապահով եւ ունենա բարեկեցիկ կյանք»,- նշեց Սիմոնյանը:

Նա ընդգծեց, որ այդ հարցերի պատասխանները պետք է տալ, եւ որ դրանց պատասխանները միանշանակ չեն հանրության մեջ:

«Չի կարող Հայաստանը լինել ամորֆ բան: Որեւիցե մեկը չի կարող այդ հարցում մեզ հետ վիճել: Չի կարող Հայաստանի քաղաքացին չհասկանալ եւ չիմանալ, թե որտեղ է սկսվում ու վերջանում իր հայրենիքը:

Հայկական լեռնաշխարհը, այո՛, իմ հայրենիքն է, իմ բնօրրանն է, բայց ես ունեմ պետություն, որը կոչվում է Հայաստանի Հանրապետություն: Մենք անկախացել ենք 1991 թվականին կոնկրետ սահմաններով, եւ դա պետք է հասկանալի լինի եւ արտացոլված լինի բոլոր փաստաթղթերում»,- ընդգծեց Սիմոնյանը:

Անդրադառնալով այն հարցին, թե Սահմանադրության փոփոխությունը Ադրբեջանի պահանջն է կամ կապ ունի արդյոք հայ-ադրբեջանական բանակցությունների հետ, ԱԺ նախագահը պատասխանեց.

«Ես ձեզ կոչ եմ անում եւ մի պնդում եմ ուզում անել, որ այսուհետ բոլոր այն դրվագներում, որտեղ դուք Հայաստանի պաշտոնյաներին նման հարց կտաք, իմացե՛ք, որ նույն հարցը բարձրացվում է Հայաստանի կողմից: Ադրբեջանի Սահմանադրությունում, Ադրբեջանի իրավական ակտերում նույնպես կան դրույթներ, որոնք հայելային պետք է փոփոխվեն:

Եվ կրկնում եմ՝ յուրաքանչյուր բանակցություն, որը Հայաստանը իրականացնում է, արվում է հայելային: Այսինքն՝ եթե կա ինչ-որ ակնարկ կամ առաջարկ ապագա խաղաղությունն ավելի ամուր դարձնելու համար, դա վերաբերելի է թե՛ Ադրբեջանին, թե՛ Հայաստանի Հանրապետությանը»,- եզրափակեց Սիմոնյանը:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐՆ Է ՀԱՆՁՆԵԼ

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպան Վահե Գեւորգյանը հունվարի 30-ին Ժողովրդի մեծ դահլիճում իր հավատարմագրերն է հանձնել Չինաստանի նախագահ Սի Ծինփինին:

Իր խոսքում ՀՀ դեսպանը ընդգծել է հայ եւ չինացի հնագույն ժողովուրդների միջեւ հարաբերություններն ամրապնդելու իր հանձնառությունը՝ վերահաստատելով Հայաստանի պատրաստակամությունն ընդլայնելու Չինաստանի հետ երկկողմ հարաբերություններն ու բազմաոլորտ համագործակցությունը:

Չինաստանի նախագահը ողջունել է ՀՀ դեսպանին՝ մաղթելով ամենայն հաջողություն նրա գործունեության ընթացքում:

Հունվարի 29-ին Վահե Գեւորգյանը ՉԺՀ ԱԳՆ-ում իր հավատարմագրերի պատճենն էր հանձնել ՉԺՀ ԱԳՆ արարողակարգի վարչության գլխավոր տնօրեն Հուն Լեյին:

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿՀՐԱՎԻՐԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն հարցաքննության կհրավիրի ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Էդուարդ Աղաջանյանին, ինչպես նաեւ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամներին:

Առիթը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախկին նախագահ Հայկուհի Հարությունյանի հայտարարությունն էր ԱԺ ամբիոնից, որից հետո նրան հրավիրել են Հակակոռուպցիոն կոմիտե եւ հարցաքննել: Նա ինչպես ԱԺ-ում, այնպես էլ իրավապահների մոտ իր նկատմամբ ճնշումների դեպքերով կոնկրետ անուններ է հնչեցրել:

Ինչպես հայտնի է, դեկտեմբերի 6-ին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախկին նախագահ Հայկուհի Հարությունյանի կողմից Ազգային ժողովում հնչեցրած հայտարարության առթիվ քրեական վարույթ է նախաձեռնվել:

Խոսքը, մասնավորապես, իր պաշտոնավարման ընթացքում եւ, դրանով պայմանավորված, իր նկատմամբ ճնշման դեպքի մասին է:

Պատասխանելով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի հարցին՝ Հարությունյանը նշել էր, որ ԱԱԾ-ից եղել է զանգ կոնկրետ սուբյեկտի վերաբերյալ կայացված բարեվարքության եզրակացության առնչությամբ:

«Ներողություն եմ խնդրում, բայց Ձեր պահանջին հետեւելով՝ հրապարակում եմ՝ Ազգային անվտանգության ծառայությունից.. որ բացասական եզրակացություն այն թեկնածուի մասով, որ ԱԺ-ում պիտի քվեարկվեր...

Արժանացել է բացասական եզրակացության, եւ դա անհանդուրժելի է նաեւ... Ներկայացվել է որպես ազգային անվտանգության խնդիր, քանի որ այդ թեկնածուի ընտրվելը պիտի ապահովվեր: Վերջին բառակապակցությունը գուցե շատ սուր հնչի: Ես անմիջապես՝ հենց այդ պահին, զանգի մասին տեղեկացրել եմ եւ փորձել եմ ճշգրտում անել՝ առհասարակ դա՝ որպես երեւույթ, ինչ-որ մեկը կառավարությունում տեղյակ է, թե ոչ, եւ պիտի շնորհակալություն հայտնեմ, որ անմիջապես արձագանքը եղել է...

Հաջորդ օրը նույնիսկ պարոն Աղաջանյանը (նկատի ունի պատգամավոր Էդուարդ Աղաջանյանին՝ հեղ.) այցելել էր նույն շենքում տեղակայված մեկ այլ կառույց՝ Բնապահպանական տեսչական մարմին, եւ նաեւ այցելեց հանձնաժողով, եւ 4 անդամով (այդ ժամանակ 4 անդամ էինք), ես անձամբ բոլորի ներկայությամբ դեպքը պարոն Աղաջանյանին ներկայացրել եմ: Վերարտադրում եմ նաեւ պարոն Աղաջանյանի խոսքերը, եւ շնորհակալություն նաեւ իրեն. դա մեր եւ մեր քաղաքական թիմի կողմից անհանդուրժելի վարքագիծ է, եւ նման դեպքերը մեզ համար անընդունելի են»,-ասել էր նա:

Գլխավոր դատախազությունից հայտնել են, որ վերոնշյալ դեպքի առթիվ Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: Վերջինս սահմանում է քրեական պատասխանատվություն պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու կամ լիազորություններն անցնելու համար:

Եվ, ահա, այս վարույթի շրջանակում նրանց կհարցաքննեն:

ՀԱԿԱՌՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶԻ ՀԵՏԵՎԱՆՔԸ

Նիկոլ Փաշինյանի իշխանության ամենատարբեր ներկայացուցիչներ հակառուսականության այնպիսի ալիք են առաջացրել, որ քաղաքացներից մեկը նախօրեին պղծել է ռուսական դրոշը:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, թե ինչ է իրավապահներին հայտնել ՌԴ դրոշի ատրիբուտները պղծող Սամվել Շիրինյանը: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ երբ իրավապահները նրան հարց են տվել, թե ինչու է նման քայլի գնացել ու խուլիգանություն կատարել, 46-ամյա Շիրինյանն ասել է, թե ռուսները մեր նկատմամբ վատ բաներ արեցին. եթե չկա Արցախի հայերի ցեղասպանության ճանաչում, չկան նաեւ Լենինգրադում տուժածներ: Ամեն դեպքում, կատարողը ձերբակալված է:

Ինչպես հայտնի է, Հայաստանում Ռուսական տան ղեկավար Վադիմ Ֆեֆիլովը դիմել է ՀՀ գլխավոր դատախազին՝ Երեւանում Լենինգրադի պաշարման ժամանակ զոհված երեխաների հիշատակին նվիրված հուշակոթողի նկատմամբ անհարգալից միջադեպի գործով:

«Ազգամիջյան ատելություն հրահրելը եւ բռնության կոչերը՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի դեպքերի հիման վրա, անընդունելի են: Տեղի ունեցածի մեղավորները պետք է պատասխանատվության ենթարկվեն: Պարզվել էր, որ հունվարի 27-ին քաղաքացի Սամվել Շիրինյանը ցուցադրաբար պոկել եւ տրորել է Ռուսաստանի Դաշնության դրոշը խորհրդանշող ժապավենները, տապալել է ծաղկեպսակները՝ այդ ամենն ուղեկցելով Ռուսաստանի հասցեին վիրավորական մեկնաբանություններով եւ տեղադրելով Tik Tok սոցիալական ցանցում»,- գրել է նա:

ArmLur.am-ը գրել էր, որ մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Սամվել Շիրինյանը հայտնաբերվել էր Բագրատաշենի անցակետից: Նա ցանկացել էր հատել ՀՀ սահմանը, սակայն իրավապահները կարողացել են կանխել նրա փախուստը:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՉԻ ՈՒՆԵՆԱ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների մրցույթն առանց ընդդիմության ներկայացուցչի կընթանա:

ArmLur.am-ը գրել էր, որ նախորդ տարեվերջին՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի ընտրության տապալումից հետո, ԱԺ-ն հունվարի 25-ին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների պաշտոններում թեկնածուների ընտրության համար նոր մրցույթ է հայտարարել, վերջնաժամկետն էլ փետրվարի 5-ն է:

ԿԿՀ անդամի պաշտոնում ինքնառաջադրված թեկնածուների մրցույթն անցկացնելու է Մրցութային խորհուրդը: Խորհրդի կազմում ընդգրկված են Սահմանադրական դատարանի նախագահի, Մարդու իրավունքների պաշտպանի, Ազգային ժողովի խմբակցությունների, Հանրային խորհրդի եւ Փաստաբանների պալատի կողմից նշանակված ներկայացուցիչները: Իշխող «Քաղաքացիական» պայմանագիր խմբակցության կողմից Մրցութային խորհրդում ընդգրկված է ՔՊ պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպան Նարիման Ալ-Մուլլան իր անկեղծ շնորհավորանքն է հղել բարեկամ հայ ժողովրդին ա.թ. փետրվարի 1-ից ԱՄԷ մեկնելիս նախապես մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատվելու կապակցությամբ:

«Մեր հայ եղբայրներն ու քույրերը վաղվանից կկարողանան Արաբական Միացյալ Էմիրություններ մուտք գործել առանց մուտքի արտոնագրի»,- «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ նշված է ՀՀ-ում ԱՄԷ դեսպանության տարածած հաղորդագրության մեջ:

Դեսպանը նաեւ շեշտել է, որ մուտքի արտոնագրերը փոխադարձաբար վերացնելու որոշումն արտացոլում է երկու երկրների միջեւ փոխըմբռնման եւ փոխադարձ հարգանքի վրա հիմնված հարաբերությունների խորությունը եւ դրանք ի շահ երկու երկրների զարգացնելու համատեղ ցանկությունը՝ հավելելով, որ այն կնպաստի ոչ միայն երկու երկրների միջեւ զբոսաշրջության, առեւտրի, տնտեսության եւ ներդրումների ոլորտներում հարաբերությունների ամրապնդմանը, այլ նաեւ կնպաստի երկու բարեկամ ժողովուրդների միջեւ մշակութային եւ քաղաքակրթական փոխգործակցության խորացմանը:

«ՀՀ քաղաքացիների համար ԱՄԷ մուտքի արտոնագրերի ազատականացումը մեր կառավարությունների կողմից ձեռնարկված համատեղ ջանքերի արդյունքն է, որն ուղղված է բոլոր մակարդակներում երկկողմ բարեկամական հարաբերությունների համար ավելի լայն հորիզոններ բացելուն եւ երկու երկրների շուկաներում գործարար համայնքների ու մասնավոր հատվածի համար նոր խոստումնալից հնարավորություններ ստեղծելուն: Այսպիսով, հույս ունենք խթանել հայ գործարարների եւ ընկերությունների ներդրումներն ԱՄԷ-ում»,- ասել է Ալ-Մուլլան:

Համարելով 2023 թվականը հաջող տարի երկու երկրների միջեւ համագործակցության ընդլայնման տեսանկյունից՝ դեսպանը հիշեցրել է, որ ԱՄԷ-ն եւ ՀՀ-ն նախորդ տարի նշել են դիվանագիտական հարաբերությունների հիմնադրման 25-ամյակը: Նա ընդգծել է, որ 2023 թ.-ի ընթացքում երկու երկրների միջեւ համագործակցությունը հանգեցրել է բազմաթիվ շոշափելի ձեռքբերումների, որոնք արտահայտվել են ոչ միայն առեւտրաշրջանառության աճով, որը 2023 թ.-ի 11 ամիսների ընթացքում հասել է ավելի քան 1,9 միլիարդ դոլարի (ըստ արտահանող երկրի), այլ նաեւ բարձրաստիճան պաշտոնյաների եւ մասնավոր հատվածի ներկայացուցիչների միջեւ փոխայցելությունների ակտիվացմամբ, ինչպես նաեւ երկուստեք առաջնահերթ ոլորտներում փոխըմբռնման հուշագրերի ստորագրմամբ:

Այս համատեքստում դեսպանը մասնավորապես բարձր է գնահատել ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի այցն ԱՄԷ, ինչպես նաեւ ԱՄԷ պետնախարար Ահմադ Ալ-Սայեղի եւ վերջերս Ալի Ալ-Նուայմիի գլխավորած ԱՄԷ Դաշնային Ազգային խորհրդի պատվիրակության այցերը Հայաստան՝ կարեւորելով նաեւ 2023թ.-ին Երեւանում կայացած հայ-էմիրաթական առաջին գործարար համաժողովը եւ ՀՀ մասնակցությունն ԱՄԷ-ում տեղի ունեցած COP28-ի համաժողովին, որն արժեւորվել է նաեւ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության եւ ԱՄԷ կիբեռանվտանգության խորհրդի միջեւ փոխըմբռնման հուշագրի ստորագրմամբ:

Ալ-Մուլլան գոհունակությամբ հայտնել է նաեւ էմիրաթական ավիաընկերությունների (Fly Dubai, Air Arabia եւ Wizz Air) կողմից երկու երկրների միջեւ շաբաթական մոտ 30 ուղիղ չվերթների իրականացումը՝ այն կարեւոր գործոն համարելով զբոսաշրջության եւ բիզնեսի ոլորտներում համագործակցության զարգացման շարունակական դինամիկայի պահպանման տեսանկյունից:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԱԴՐԵՐ ՉԿԱՆ

ՈՉ ՈՔ ԻՐ ՈԼՈՐՏԻՆ ՉԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կառավարական կաբինետից դժգոհ է:

ArmLur.am-ի՝ կառավարությանը մոտ կանգնած աղբյուրները փոխանցում են, որ Փաշինյանը եթե կադրեր գտնի, որոնք կցանկանան իր հետ աշխատել, ապա բոլոր նախարարներին, գերատեսչության ղեկավարներին կազատի աշխատանքից՝նոր կադրերով փոխարինելով: Բանն այն է, որ Նիկոլ Փաշինյանն արդեն տեւական ժամանակ է՝ շրջում է գերատեսչություններով, ղեկավարներին հարցեր է ուղղում իրենց ոլորտից, բայց պարզվում է՝ ոչ ոք իր ոլորտին չի տիրապետում: Ու այդ այցերից հետո որոշում է կայացրել հերթով, շարքով փոխել բոլորին: ArmLur.am-ի աղբյուրները փոխանցում են, որ այս պահին երեք նախարարի փնտրտուքի մեջ է. նախ պետք է հեռանան ՀՀ շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը եւ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը: Այս երեք նախարարները, պարզել է Փաշինյանը, բացարձակ չեն տիրապետում իրենց ոլորտին. փակ հանդիպումներին հարց է տվել նրանց, սակայն այդ հարցերը մնացել են անպատասխան: Ըստ մեր աղբյուրների՝Սիմիդյանն անգամ չի կարողացել տարրական հարցերին պատասխանել, ինչը շատ վրդովեցրել է Փաշինյանին: Վարչապետը հայտարարել է, որ Սիմիդյանը պետք է անհապաղ հեռանա, բայց ոչ մի կադր չկա, որպեսզի նրան ազատի, մյուսին նշանակի: Սեւ ամպեր են կուտակված նաեւ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի գլխին, որը տեւական ժամանակ լարված սպասում է իր ազատմանը, ՀՀ արդարադատություն նախարար Գրիգոր Մինասյանի, որն անդադար միջնորդներ է փնտրում իր պաշտոնին մնալու համար, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի, որը «ցնցուղի» հայտնի պատմությունից հետո Փաշինյանի ուշադրության կենտրոնում է հայտնվել: Մյուս նախարարների աշխատանքից եւս Փաշինյանը դժգոհ է ու նրանց ակնհայտ ցույց է տալիս իր բացասական վերաբերմունքը: Վարչապետը ծանր կացության մեջ է հայտնվել, քանի որ բոլորը գիտեն, որ նա «ծանր» բնավորություն ունի, ու որեւէ մեկը այս պահին չի ցանկանում իր «անցավ» գլուխը դնել ցավի տակ: Ըստ ArmLur.am-ի աղբյուրների՝ անգամ ԱԺ ՔՊ խմբակցության տարբեր պատգամավորների է առաջարկվում օրենսդիրից տեղափոխվել գործադիր, բայց նրանք կտրուկ հրաժարվում են այդ առաջարկից: Մարզպետների փոփոխություն եւս Փաշինյանը նախատեսել է, բայց կրկին հայտնվել է ծանր դրության մեջ, երբ պարզել է, որ իր թիմում ոչ ոք չի ցանկանում իր հետ գործադիրում աշխատել: Հիմա Փաշինյանը կադրերի փնտրտուքի մեջ է, հայտարարություն են պաշտոնապես տարածում, սակայն կադրային բանկն այդպես էլ չի համալրվում:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ՝ ՔԿՀ ՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ

Հունվարի 29-ին հայտնի դարձավ, որ արդարադատության գնդապետ Արսեն Արզումանյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից եւ փոխադրման կարգով նշանակվել է Արդարադատության նախարարության «Արմավիր» բեռնատարողական հիմնարկի պետ:

Բանն այն է, որ երկար տարիներ ՀՀ ոստիկանության Կոտայքի բաժնում աշխատած՝ ՀՀ ԱՆ «Սեւան» ՔԿՀ նախկին պետ Արսեն Արզումանյանն այդպես էլ օպերլիազորից ՔԿՀ պետ չդարձավ: Եթե որպես ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ պետ՝ նա աշխատեց ընդամենը երեք ամիս եւ հասցրեց անաղմուկ հեռանալ պաշտոնից, ապա նախորդից մեկ ամիս էլ ավել նա «Սեւան» ՔԿՀ-ի պետ է աշխատում, ու այս ընթացքում քրեակատարողական հիմնարկից միայն բողոքներ էին հասնում:

Այսպիսով, Քրեակատարողական օրենսգրքի (ՔԿՕ) 83-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ դատապարտյալին քրեակատարողական հիմնարկի պետի սահմանած ժամանակացույցով տրամադրվում է հեռախոսակապից եւ տեսազանգից օգտվելու հնարավորություն՝ պետական միջոցների հաշվին: Հեռախոսակապից եւ տեսազանգից դատապարտյալը լրացուցիչ օգտվում է սեփական միջոցների հաշվին: Հեռախոսակապից կամ տեսազանգից օգտվելու տեւողությունը յուրաքանչյուր դեպքում չի կարող գերազանցել 20 րոպեն, բացառիկ դեպքերում այն կարող է երկարաձգվել եւս 10 րոպեով: Մինչդեռ, մամուլից հայտնի էր դարձել, որ նոր պետի օրոք թույլատրվում է դատապարտյալներին զանգահարել ընդամենը մեկ անգամ եւ ոչ ավելին, քան 15 րոպեով: Ընդ որում՝ հեռախոսն ընդամենը մեկ հատ է՝ մոտ 200 դատապարտյալի համար, իսկ անվճար զանգերի մասին խոսք անգամ չկա: Արդյունքում, իր ողջ բարոյական հետեւանքներով հանդերձ, հերթեր են գոյանում զանգահարելու համար, մանավանդ որ հեռախոսազանգերի տրամադրումը կատարվում է մինչեւ աշխատանքային օրվա ավարտը:

Հաջորդ խնդիրը կապված է դատապարտյալներին հանձնուքներ եւ ծանրոցներ ուղարկելու հետ: Ըստ ՔԿՕ 81-րդ հոդվածի առաջին կետի՝ դատապարտյալը կարող է շաբաթվա ընթացքում ստանալ մինչեւ 20 կիլոգրամ (ներառյալ հեղուկ) հանձնուք եւ ծանրոց, սակայն սահմանափակում դրված չէ, թե մեկ հոգին քանի դատապարտյալի կարող է հանձնուք փոխանցել, ընդամենը պետք է լինի դատապարտյալի գրավոր համաձայնությունը, որը նախատեսված է օրենքով: Բայց, ըստ մեզ հասած տեղեկությունների, ՔԿՀ պետ Արսեն Արզումանյանը որոշել է, որ մեկ հոգին հանձնուք կարող է փոխանցել միայն մեկ դատապարտյալի: Խնդիրն այն է, որ, օրինակ, մեկ անձը կարող է ունենալ մի քանի բարեկամ դատապարտված կամ ուղղակի մեկի հարազատը մյուսի հարազատին խնդրի, որ եթե գնում է ՔԿՀ, իր դատապարտյալին էլ հանձնուք փոխանցի, ինչը դարձել է անհնար: Այստեղ ՔԿՀ պետը քրեական ենթամշակույթի տարրեր է տեսնում, իսկ դատապարտյալների հարազատները բացատրում են, որ չեն ասում, թե 200 դատապարտյալի համար հանձնուք են տանելու, բայց գոնե թիվ սահմանեն՝ երկու-երեք հոգու համար, հատկապես երբ մեկ այլ մարզից մեկ այլ մարզ են գալիս՝ «Սեւան» ՔԿՀ հասնելու համար: Ընդ որում՝ ընդունարան հասնելու համար էլ պետք է դեռ երկար ճանապարհ անցնել՝ ոտքով ու ծանր բեռով, քանի որ հիմնարկի տարածք մեքենայով մուտքն արգելվում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ

ԴԱՏԱՐԱՆԻ ԴՌՆԵՐՆ ԵՆ ԸՆԿԵԼ

Մինչ Պաշտպանության նախարարությունը նոր վարժական հավաքների մասին է հայտարարում, մի խումբ քաղաքացիներ վարժական հավաքներից խուսափելու համար դատարանի դռներն են ընկել:

Երեկ ՊՆ-ն հայտնել է, որ 2024թ.-ի ապրիլի 15-ից հուլիսի 15-ը կանցկացվեն պահեստազորայինների վարժական հավաքներ:

Վարժական հավաքներին կներգրավվի մինչեւ 435 քաղաքացի, որոնցից 128-ը՝ կրտսեր ենթասպայական եւ շարքային կազմերի, 9-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 298-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ:

Հավաքները հայտարարվում են պահեստազորում հաշվառված քաղաքացիների ռազմական ունակությունների կատարելագործման, մասնագիտական վերապատրաստման նպատակով:

Ուշագրավն այն է, որ մինչ ՊՆ-ն նոր հայտարարություն է անում, վարժական հավաքներից խուսափողների թիվը դատարանում օր օրի ավելանում է:

2023 թվականի մայիսի 26-ին ՀՀ քննչական կմոիտեն պաշտոնական տվյալներ էր ներկայացրել վարժական հավաքներից խուսափող անձանց դեմ հարուցված քրեական գործերով: ՀՀ քննչական կոմիտեի ՋՔԳ վարչությունում կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ մի շարք անձինք, հաշվառված լինելով ՀՀ ԶՈՒ պահեստազորում, խուսափում են մասնակցել ՀՀ կառավարության որոշումներով 2022 թվականից պարբերաբար հայտարարվող՝ ռազմական ունակությունների կատարելագործմանը, մասնագիտական վերապատրաստմանը եւ պատրաստմանն ուղղված վարժական հավաքներից:

Ուսումնասիրության համաձայն՝ վարժական հավաքների անցկացման սկզբից ի վեր՝ 2022-2023 թվականների ընթացքում, ՀՀ ՔԿ քննչական բաժիններում ստացվել է վարժական հավաքներից խուսափելու առերեւույթ դեպքերի առթիվ ընդհանուր 160 հաղորդում, որոնցով նախաձեռնվել են քրեական վարույթներ:

Նշված վարույթներով քրեական հետապնդում է հարուցվել ընդհանուր 45 անձի նկատմամբ: 24 անձի վերաբերյալ քրեական վարույթներ, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին: Նշված քրեական վարույթներով մեղադրական եզրակացությունները հաստատվել են, եւ գործերն ուղարկվել դատարան: Քրեական վարույթների մի մասով դեռեւս նախաքննությունը շարունակվում է:

Ավելին՝ ArmLur.am-ը պարբերաբար անդրադառնում է վարժական հավաքներից խուսափողների նկատմամբ հարուցված քրեական գործերին:

Գրել էինք, որ 2023 թվականին վարժական հավաքներից խուսափելու համար շուրջ 40 անձի վերաբերյալ քրեական գործեր են ուղարկվել դատարան, եւ նրանց մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 462-րդ հոդվածի առաջին մասի հատկանիշներով:

Ըստ Քրեական օրենսգրքի 462-րդ հոդվածի առաջին մասի՝ անցկացվող վարժական հավաքից խուսափելը այդ վարժական հավաքից ազատվելու՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության դեպքում պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

«ՄԱՆՐ ՁԿՆԵՐԻ» ՈՐՍ

Երեկ Քննչական կոմիտեից հայտնեցին, որ ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում եւ հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչությունում իրականացվող երկու տարբեր քրեական վարույթներով ՀՀ քննչական կոմիտեի քննիչների եւ ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից համատեղ իրականացվում են անհետաձգելի քննչական եւ այլ դատավարական լայնածավալ գործողություններ, այդ թվում՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում եւ մի շարք անձանց բնակարաններում, ընդհանուր առմամբ ավելի քան 15 վայրերում կատարվում են խուզարկություններ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ խուզարկություններ են իրականացվել նախարարության գնումների վարչության աշխատակիցների եւ ղեկավարների բնակարաններում, ինչպես նաեւ խուզարկել են փոխնախարար Անի Իսպիրյանի բնակարանը:

Նշենք, որ իրավապահների այս գործողությունները նախարարության՝ գնումների գործընթացում հնարավոր չարաշահումների, կասկածելի գործողությունների հետ է կապված: Նկատենք, որ իրավապահ մարմիններն ընկել են «մանր ձկների» հետեւից, մինչդեռ «խոշոր ձկները»՝ ի դեմս նախարար Քերոբյանի, իրավապահների տեսադաշտում չեն:

Հիշեցնենք, որ երեկ հայտնի դարձավ, որ փոխնախարար Անի Իսպիրյանն ազատվել է աշխատանքից:

ՋԻՆՎԱԾ ՄԱՐՄԱՐԻԿՑԻՆ

ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ մարդու եւ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի վարչության ֆինանսավարկային եւ մտավոր սեփականության ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի եւ Մալաթիայի բաժինների ծառայողները համատեղ իրականացրած միջոցառումների արդյունքում հունվարի 25-ին՝ ժամը 21.30-ին, ապօրինի զենք-զինամթերք պահելու կասկածանքով Լենինգրադյան փողոցում ձերբակալել եւ, «Ռենջ Ռովեր» մակնիշի մեքենայով հանդերձ, Մալաթիայի բաժին են ներկայացրել Կոտայքի մարզի Մարմարիկ գյուղի 33-ամյա մի բնակչի:

Բաժնում նա հայտնել է, որ մեքենայի սրահի պահոցում պահում է «Մակարով» տիպի ատրճանակ՝ փամփուշտներով, որն անօրինական է, իսկ բեռնախցիկում պահում է տարբեր տեսակի ինքնաձիգներ եւ ռազմամթերք, որոնք հաշվառված են իր անվամբ: Մեքենան տեղափոխվել է բաժնի հատուկ պահպանվող տարածք: Հունվարի 30-ին քննչական բաժնից գրություն է ստացվել, որ նշված մեքենայի խուզարկության ժամանակ մարմարիկցի 33-ամյա երիտասարդը սրահից ներկայացրել է «Մակարով» տիպի ատրճանակ, 9 մմ տրամմաչափի 2 փամփուշտ, բեռնախցիկից՝ իր անվամբ հաշվառված երկու ինքնաձիգ եւ «Սայգա» գրառմամբ մեկ պահեստատուփ՝ լիցքավորված 30 փամփուշտով, չորս տուփ փամփուշտ, մեկ դատարկ փամփշտատուփ, իսկ մեքենայի սրահից հայտնաբերվել է դանակ: Կատարվում է նախաքննություն:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 29-ից 30-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 50 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

6 ՏԱՐԻ ՔՆՆՈՒՄ ԵՆ

2018 թվականին Իջեւան քաղաքի բնակչից բողոք ենք ստացել, որ իր զավակը սովորել է «Հայբուսակ» համալսարանի Իջեւանի մասնաճյուղում, ուսման վարձ է մուծել, սակայն այդպես էլ դիպլոմ չի ստացել: Այդ կապակցությամբ 2018թ. մարտի 13-ին գրավոր հարցում ենք ուղարկել ՀՀ քննչական ծառայություն, նույն թվի մարտի 19-ին ստացել ենք գրավոր պատասխան, ուր նշված է. «Երեւանի «Հայբուսակ» համալսարանի Իջեւան քաղաքի ներկայացուցչության տնօրենի կողմից 2013-2014 ուսումնական տարում նույն քաղաքի բնակչի կողմից ստացված «Հայբուսակ» համալսարանի Իջեւանի մասնաճյուղում ընդունվելու եւ սովորելու պատրվակով մաս-մաս, որպես վարձավար վերցված գումարը յուրացնելու դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Իջեւանի բաժնում հարուցվել է քրեական գործ՝ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի եւ 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, որով նախաքննությունը շարունակվում է ՀՀ քննչական կոմիտեի քննչական տարածքային վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչությունում: Քրեական գործով ձեռնարկվում են մեծածավալ քննչական եւ դատավարական այլ գործողություններ՝դեպքի հանգամանքների բազմակողմանի, օբյեկտիվ եւ լրիվ քննություն ապահովելու ուղղությամբ»: 6 տարի անց՝ 2024թ. հունվարի 9-ին, ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ հարցնելով, թե «Հայբուսակ» համալսարանի Իջեւանի ներկայացուցչության հանդեպ հարուցված քրեական գործն ինչ փուլում է, դատախազությունն այդ քրեական գործի նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնում է արդյոք: Գլխավոր դատախազությունից ստացված պաատասխանում նշված է. ««Հայբուսակ» համալսարանի Իջեւանի ներկայացուցչության վերաբերյալ հարուցված քրեական գործը գտնվում է նախաքննության փուլում»: Դատախազությունը նաեւ հայտնել է, որ այդ քրեական վարույթով ՀՀ դատախազությունը, ՀՀ օրենսդրությանը համապատասխան, հսկողություն է իրականացնում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ:

ՄԵՐԺԵԼ ԵՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-Ը

Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղի միջնակարգ դպրոցում ստացել են ԿԳՄՍ նախարարության գրությունն այն մասին, որ դպրոցը պետք է վերաբերմունք արտահայտի պատմության առարկայի անվանման վերաբերյալ՝«Հայոց պատմություն», թե «Հայաստանի պատմություն»: Ոսկեպարի դպրոցում պատմության ուսուցիչների, դպրոցի տնօրենի մասնակցությամբ քննարկումով որոշվել է, որ դպրոցական այդ առարկայի ճիշտ անվանումը «Հայոց պատմությունն» է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՉՄՈՌԱՑԱՎ ԼԻՆԵԼ ԵՐԿՐԻ ԻՍԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ

Բալասանյանների բազմանդամ ընտանիքը ապրում էր Արցախի Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղում:

2023թ. Արցախի հայաթափումից հետո նրանք եւս բռնի տեղահանվում են եւ բնակություն հաստատում Էջմիածնում: Իհարկե, Բալասանյանները չեն բողոքում, բայց տունը փոքր է, չվերանորոգված ու խոնավ: «Տունը ամբողջությամբ թափած էր, ապրելու պայման չկար, բայց ստիպված դասավորվեցինք. ուրիշ գնալու տեղ չկար: Փայտի վառարանով ենք տաքանում: Մեզ համար տանը ցուրտ էր, եւ այդ օրերին էլ նկատեցի դրսում անտեր ու անօգնական շան երկու ձագուկների, որոշեցի վերցնել ու հոգ տանել նրանց մասին: Կարծում եմ՝ հիմա նրանք ինձանից գոհ են, քանի որ կուշտ են ու չեն մրսում»,- ԱրշԼur.aշ-ի հետ զրույցում պատմում է Արցախից բռնի տեղահանված 23-ամյա Էլինան: Խոսելով պատերազմի մասին՝ ընտանիքի մայրը՝ 42-ամյա Նարինե Մուսայելյանը, հիշում է. «Մեր տղամարդիկ դրսում պաշտպանում էին գյուղը. գնացինք, ռուսին ասեցինք՝ օգնեն, բայց ասացին՝ մենք հրաման չունենք, ոչ մի բան անել չենք կարող: Մենք էլ ոչինչ անել չէինք կարող, մնացինք նկուղում: Հաջորդ օրն արդեն համայնքապետն ասաց, որ բնակչությունը պիտի տարհանվի Ստեփանակերտ: Բերդաշենից Ստեփանակերտ գնալն օրեր տեւեց: Մեր գյուղում տատիկ, պապիկ ունեինք, մենակ էին: Երկար համոզելուց հետո նրանց մեզ հետ բերեցինք Ստեփանակերտ՝ աղջկա տուն: Մեզ թվում էր, թե կլուծվի հարցը, ու շուտ կվերադառնանք. չէինք կարծում, որ կհասնենք այստեղ՝ Հայաստան»: Նարինեն հինգ երեխա ունի՝երեք աղջիկ, երկու տղա: Ավագը 23-ամյա Էլինան է, ում Արցախի շրջափակման ծանր օրերին միակ լուսավոր կետը եղել է իր դուստրը՝Լուսէն, որի մեջ էլ տեսնում է իր ողջ կյանքի իմաստը: «Դեռ շրջափակման ժամանակ, երբ ուտելիք չկար, գրեթե ոչինչ չկար, ամեն ինչ անում էի, որ երեխաս չտխրի: Ժամեր շարունակ հացի հերթ էի կանգնում, որ գոնե հաց գտնեմ երեխայիս համար: Հիմա էլ՝ այս ծանր օրերին, նա է իմ շարժիչ ուժը», -ասում է մեր զրուցակիցը: Երբ արդեն հայտարարել էին Արցախից դուրս գալու մասին, Էլինան փորձել է սեպտեմբերի 25-ին դուրս գալ, սակայն իմանալով «Հայկազով» զորամասի պահեստի պայթյունի մասին՝ կանգնեցրել է իրեն Հայաստան տեղափոխող մեքենան, երեխային հանձնել հարազատներին ու որպես կամավոր օգնել հիվանդանոց տեղափոխված այրված, վիրավոր մարդկանց: «Քույրս՝ Գալինան, մասնագիտությամբ դեղագետ է, միասին հետ գնացինք տուն, վերցրինք մկրատ, բինտ, ճանապարհին փակ դեղատան պատուհանները կոտրեցինք ու արկղերով դեղամիջոցներ, նյութեր, ինչ ընկավ ձեռքներիս տակ, վերցրինք, տարանք հիվանդանոց: Անբացատրելի էր, այրված մսի հոտը տարածվել էր ամբողջ հիվանդանոցում, մարդիկ, որոնց մեջ կային կանայք, երեխաներ, ամբողջությամբ սեւ էին, այրված, կիսաայրված, մազերը խանձված, մի բուռ դարձած, կանանց եղունգները պոկված, հագուստները պատռված: Այրվածքների ցավից բղավող մարդկանց ձայների ուղեկցությամբ սկսեցի աշխատել՝ մտածելով միայն մարդկանց օգնելու մասին»,- խորը ցավ ապրելով՝ վերհիշում է Էլինան: Էլինան ասում է՝ արտասվելու ժամանակ չկար, պետք էր հավաքվել, զսպել էմոցիաները եւ սառնասրտորեն գործել: Վիրավորների հետ խոսում էր ու սիրտ տալիս, որ միասին են հաղթահարելու ստեղծված դժվարությունները: Էլինան հիշում է, որ այդ օրերին բոլորն իրար հարազատ մարդիկ էին: «Ծանոթ-անծանոթ միեւնույնն էր. բոլորը կարեկից էին միմյանց հանդեպ: Հանդիպելով անծանոթի՝հիշում եմ, որ բոլորը հավաքվում էին մի լուր, մի նոր տեղեկություն ստանալու ակնկալիքով: Այդ օրերին ես շարունակում էի հիվանդանոցում լինել: Մարդիկ անընդհատ զանգում էին, հարցնում՝ իրենց հարազատն արդյոք հիվանդանոցում է: Երբ մոտենում էի, որ ջրով կամ որեւէ նյութով վերք սրբեի, ներողություն էի խնդրում, որ կցավեցնեմ, ու խնդրում էի, որ ցավից հանկարծ ինձ չխփեն: Շատ վախենալու էին արտաքնապես այդ մարդիկ»,-հիշում է նա: Էլինան՝որպես երկրի իսկական քաղաքացի, իր բաժին պարտքը կատարելուց հետո ուղեւորվել է Հայաստան: Գաղթի ճանապարհին, պատմում է, որ անասելի անմարդկային պայմանների է ականատես եղել, սակայն միշտ փորձել է մի լույս գտնել: Գաղթի ճանապարհին մոլորված երկու հավ է գտել եւ իրենց հետ վերցրել մեքենայի մեջ: Ճանապարհին այդ հավերի ածած ձուն հարեւան մեքենաներից մեկի մոտ եղած գազով եփում է ու տալիս երեխային: «Այդ երկու հավերը միշտ պահելու եմ: Այժմ մեր նոր բնակավայրում բարերարների օգնությամբ 47 հավ եմ պահում, իսկ հավկիթներն էլ պարբերաբար վաճառում եմ: Ստեղծել եմ «Լուսէ օրգանիք» բրենդը, որը ներկայացնում եմ սոցցանցերում: Մենք Արցախում ունեինք մեղուներ, սովորել էի մեղվապահությունը ու վերջերս Լոռիում էի, որտեղ նկատելի էր գյուղատնտեսությամբ զբաղվելու բարենպաստ պայմանները: Շատ կուզեմ այնտեղ տուն ունենալ, պահել մեղուներ եւ օրգանական մթերք վաճառել», -իր երազանքի մասին է բարձրաձայնում Էլինան:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀ

ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ՝ ՀՕԳՈՒՏ ՀՀ-Ի

Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի հունվարի 25-ին վարույթ է ընդունել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ 98-րդ հայցադիմումը:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է Գլխավոր դատախազության տարածած հաղորդագրությունից, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ ՀՀ մշակույթի նախկին նախարար Հասմիկ Պողոսյանից եւ նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 301 միլիոն 218 հազար դրամ՝ որպես ապօրինի դրամական միջոցների մնացորդ, որը հանդիսանում է ապօրինի ծագում ունեցող գույքերի վերափոխման կամ օգտագործման արդյունքում առաջացած գումար,
- 567 միլիոն 396 հազար դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում եւ հնարավոր չէ բռնագանձել, քանի որ փոխանցվել է բարեխիղճ ձեռքբերողի, եւ/կամ հնարավոր չէ նույնականացնել,
- 1 իրավաբանական անձանցում մասնակցություն,
- 3 միլիոն 331 հազար դրամ՝ փոխառությունից ծագող պահանջի իրավունք,
- 4 միլիոն 863 հազար դրամ՝ նախկին նախարարին նախկինում պատկանած տրանսպորտային միջոցի շուկայական արժեք:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 11 պատահար. 11 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՊԵՏԵՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետ, արդարադատության գնդապետ Ամբակում Գրիգորյանը «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի անձնակազմին է ներկայացրել հիմնարկի նորանշանակ պետ, արդարադատության գնդապետ Արսեն Արզումանյանին, այնուհետեւ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում ներկայացրել է նորանշանակ պետ Լաերտ Գրիգորյանին: ArmLur.am-ը ներկայացնում է, թե ինչ ունեցվածք եւ եկամուտներ ունեն նորանշանակ պետերը: Այսպիսով, «Արմավիր» ՔԿՀ պետ Արսեն Արզումանյան. Արզումանյանը համեստ ունեցվածք ունեցող ՔԿՀ նորանշանակ պետ է, որը տուն չունի, մեքենա չունի, սակայն սա՝ առաջին հայացքից: Արզումանյանի կինը՝ Վարդուշ Աբրահամյանը, միանձնյա սեփականությամբ 2014 թվականին գնել է բնակարան Կոտայքի մարզի Աբովյան համայնքում: Պետի մայրը՝ Սվետլանա Արզումանյանը, միանձնյա սեփականությամբ անհատական բնակելի տուն է ձեռք բերել 2019 թվականին նույն համայնքում: Ե՛ւ կինը, եւ՛ մայրը զգալի որեւէ ֆինանսական եկամուտներ չունեն նման բնակարան գնելու համար: Արզումանյանի մայրը թոշակառու է, որը ստանում է տարեկան 432 հազար դրամ կենսաթոշակ, իսկ Արզումանյանի տարեկան եկամուտը կազմել է ընդամենը 5 մլն 252 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրություն է ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկից եւ ՀՀ քրեակատարողական ծառայությունից: Նրա կանխիկ դրամական միջոցները կազմել են 1 մլն դրամ եւ 2 հազար ԱՄՆ դոլար: ArmLur.am-ը գրել էր, որ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում արշալույսները խաղաղ չեն լինելու: Բանտում իրարանցում է, եւ այն կապված է նորանշանակ պետի հետ: Հաջորդ նշանակումը, որ հաջորդեց Արզումանյանին, «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետի պաշտոնում Լաերտ Գրիգորյանին էր: Գրիգորյանը Վաղարշապատ եւ Մեծամոր համայնքներում ունի համատեղ սեփականությամբ 2 բնակարան, որոնք ձեռք են բերվել 1989 թվականին: 2019 թվականին գնել է 2011 թվականի արտադրության Toyota մակնիշի ավտոմեքենա, որը 2022 թվականին 4 մլն դրամով վաճառել է: Գրիգորյանի 2022 թվականի տարեկան եկամուտները կազմել են 10 մլն 807 հազար դրամ, որից 6 մլն 807 աշխատանքի վարձատրություն է ՀՀ ԱՆ ՔԿԾ-ից: Հետաքրքիրն այն է, որ Գրիգորյանը գրեթե իր աշխատանքի վարձատրությանը համարժեք թանկարժեք զարդ է հայտարարագրել, որը ժառանգություն է ստացել 1990 թվականին: Նրա կանխիկ դրամական միջոցները կազմել են 17 մլն դրամ, 15 հազար ԱՄՆ դոլար եւ 5 հազար եվրո:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐՑԱԽ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կենսաթոշակներն ու նպաստները ՀՀ-ում նշանակվում եւ վճարվում են գործող օրենսդրությանը համապատասխան: Ըստ այդմ՝ տեղահանված անձանց համար կենսաթոշակի նշանակման պայմանները (այդ թվում՝ կենսաթոշակի իրավունք տվող տարիքը, աշխատանքային ստաժի տեւողությունը) նույնն են, ինչ ՀՀ քաղաքացիների համար:

Ստորեւ ներկայացնում ենք՝ ՀՀ-ում որ կենսաթոշակներից եւ ինչպես կարող են օգտվել ԼՂ-ից բռնի տեղահանված անձինք:

ԼՂ-ից բռնի տեղահանված հայրենակիցները ՀՀ-ում բնակության վայրի հասցեում հաշվառում ունենալու դեպքում կարող են դիմել հետեւյալ կենսաթոշակների նշանակման համար.

- աշխատանքային (տարիքային, արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մասնակի),
- զինվորական (երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում):

Եթե վերջիններս ԼՂ-ում ստացել են ծերության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակ, ապա, վերոնշյալ կենսաթոշակների փոխարեն, նրանց ՀՀ-ում նշանակվում է համապատասխանաբար ծերության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ:

Եթե անձը ԼՂ-ում կենսաթոշակ է ստացել պետական պաշտոններ զբաղեցնելու հիմքով, ապա Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն ներկայացված դիմումի հիման վրա՝նրան նշանակվում է աշխատանքային կենսաթոշակ կամ համապատասխան մարմնի (օրինակ՝ Պաշտպանության նախարարություն) կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում դիմելու դեպքում՝ զինվորական կենսաթոշակ:

ՀՀ-ում կենսաթոշակը նշանակվում, վճարվում, չափը հաշվարկվում է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված կարգով: Համաձայն աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգի (բանաձեւ)՝ աշխատանքային կենսաթոշակի չափը կախված է աշխատանքային ստաժի տեւողությունից, հիմնական կենսաթոշակի չափից ու աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքից:

Ըստ այդմ՝

- ՀՀ-ում նվազագույն կենսաթոշակի չափը 36,000 է,

գ հիմնական կենսաթոշակի չափը՝ 24,000 դրամ (ԼՂ-ում սահմանված է եղել 21,500 դրամ),

- աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը՝ առաջին տասը տարվա համար՝ 950 դրամ (ԼՂ-ում՝ 1,150 դրամ),
- տասը տարին գերազանցող յուրաքանչյուր տարվա համար՝ 500 դրամ (ԼՂ-ում՝ 600 դրամ):

Հետեւաբար, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակված եւ հաշվարկված կենսաթոշակի չափը կարող է տարբերվել Լեռնային Ղարաբաղում նշանակված եւ վճարված կենսաթոշակի չափից:

ՀՀ-ում կենսաթոշակը վճարվում է անկանխիկ եղանակով: Կենսաթոշակառուի դիմումի հիման վրա՝ կենսաթոշակը կարող է վճարվել նաեւ կանխիկ եղանակով, եթե կենսաթոշակառուն (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ է կամ լրացել է նրա 75 տարին:

Կենսաթոշակը լիազորագրով կամ 14 տարին լրացած անչափահասին վճարվում է կանխիկ եղանակով:

Կենսաթոշակի նշանակման համար անհրաժեշտ է դիմել Միասնական սոցիալական ծառայության ցանկացած տարածքային կենտրոն:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Գ

ՅՈՒՆԻԲԱՆԿ

Թողարկողի անվանումը՝ «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերություն: «Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից թողարկվող պարտատոմսերի հիմնական պայմանները	
Արժեթղթերի դասը	Անվանական արժեկտրոնային
Արժեթղթերի ձեւը	Ոչ փաստաթղթային
Մեկ արժեթղթերի անվանական արժեքը	10,000 ՀՀ դրամ
Արժեթղթերի քանակը	100, 000 հատ
Մեկ թողարկման ընդհանուր ծավալ	2,000, 000, 000 ՀՀ դրամ
Արժեկտրոնային եկամուտ (պարտատոմսերի անվանական տոկոսադրույք)	Տարեկան 11%
Արժեկտրոնային եկամուտների վճարում	Եռամսյակային վճարումների պարբերականությամբ
Շրջանառության ժամկետ	36 ամիս
Երկրորդային շուկա	Հայաստանի Ֆոնդային Բորսա
Թողարկման ամսաթիվ	01.02.2024
Տեղաբաշխման ժամկետ	01.02.2024թ. – 15.03.2024թ.
Տեղաբաշխող	ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ
Կորպորատիվ պարտատոմսերը կարող եք ձեռքբերել «Յունիբանկ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ տեղաբաշխման ավարտից սկսած դրանք շրջանառվելու են երկրորդային շուկայում (ցուցակումից հետո) մասնավորապես Հայաստանի Ֆոնդային Բորսա ԲԲԸ ֆոնդային բորսայի առևտրային հարթակում:	
Պարտատոմսերը ձեռքբերելու համար անհրաժեշտ է արժեթղթերի և բանկային հաշիվներ բացել, համապատասխանաբար , «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ –ում և «Յունիբանկ» ԲԲԸ –ում: «Յունիբանկը» հանդիսանում է Հաշվի օպերատոր, հետևաբար բոլոր հաշիվները հնարավոր կլինի բացել հենց բանկում:	
«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ և երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:	
Պարտատոմսերի մարման ամսաթիվը	01.02.2027թ.

Ծանուցում

«Յունիբանկ» ԲԲԸ թողարկման պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը եւ պարտատոմսերի մարումը կիրականացվի հետեւյալ ժամանակացույցով.

Արժեկտրոնային եկամուտների առաջին վճարում՝ 01.05.2024 թ.

Արժեկտրոնային եկամուտների երկրորդ վճարում՝ 01.08.2024թ.

Արժեկտրոնային եկամուտների երրորդ վճարում՝ 01.11.2024թ.

Արժեկտրոնային եկամուտների չորրորդ վճարում՝ 01.02.2025թ.

Արժեկտրոնային եկամուտների հինգերորդ վճարում՝ 01.05.2025թ.

Արժեկտրոնային եկամուտների վեցերորդ վճարում՝ 01.08.2025թ.

Արժեկտրոնային եկամուտների յոթերորդ վճարում՝ 01.11.2025թ.

Արժեկտրոնային եկամուտների ութերորդ վճարում՝ 01.02.2026թ.

Արժեկտրոնային եկամուտների իններորդ վճարում՝ 01.05.2026թ.

Արժեկտրոնային եկամուտների տասներորդ վճարում՝ 01.08.2026թ.

Արժեկտրոնային եկամուտների տասնմեկերորդ վճարում՝ 01.11.2026թ.

Արժեկտրոնային եկամուտների տասներկուերորդ վճարում՝ 01.02.2027թ.

Արժեկտրոնային եկամտի, ինչպես նաեւ մարման գումարը վճարվում է՝ վճարման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ կազմված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա, «Յունիբանկ» ԲԲԸ-ում պարտատոմսերի անվանական արժեքին հավասար գումարները ներդրողների բանկային համապատասխան հաշիվներին փոխանցելու միջոցով:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Տեղեկատու կենտրոն՝ + 374 10 59 55 55:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՓԽՐՈՒՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

«ԱՄԲԵՐԴ»-Ը՝ «7 ԱՄԵՆԱՎՏԱՆԳՎԱԾ»-ՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ

«Եվրոպա Նոստրան», Մշակութային եւ բնական ժառանգությանը նվիրված քաղաքացիական հասարակության եվրոպական ձայնն ու Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) ինստիտուտը հունվարի 30-ին հայտարարել են Եվրոպայում գտնվող եւ 2024թ. «7 ամենավտանգված» ծրագրում ընդգրկված հուշարձանների ու ժառանգության վայրերի անունները:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության տարածած հաղորդագրությունից, Ամբերդ պատմամշակութային արգելոցն ընդգրկվել է «7 ամենավտանգված» ծրագրի կարճ ցուցակում՝ որպես Եվրոպայի 11 ամենավտանգված ժառանգության վայրերից մեկը:

2024 թվականի Եվրոպայի 11 ամենավտանգված հուշարձաններն ու ժառանգության վայրերն են.

«Ամբերդ» պատմամշակութային արգելոց, ՀԱՅԱՍՏԱՆ,

Դուրեսի հնավայր (Muret e Portus), ԱԼԲԱՆԻԱ,

Միդի պալատ (Palais du Midi), Բրյուսել, ԲԵԼԳԻԱ,

Աշխատավորների դասի բնակարաններ Ռուբե-Տուրկուենում, ՖՐԱՆՍԻԱ,

Կիկլադյան կղզիներ, Սիֆնոս, Սերիֆոս եւ Ֆոլեգանդրոս, ՀՈՒՆԱՍՏԱՆ,

Գեսատի Սուրբ Պետրոս եկեղեցի, Միլան, ԻՏԱԼԻԱ

Սիենայի սինագոգ, ԻՏԱԼԻԱ,

Շտայնորտ պալատ, Հյուսիսային Մասուրիա, ԼԵՀԱՍՏԱՆ,



Հարավսլավիայի ժողովրդական բանակի տուն Շաբաչում, ՍԵՐԲԻԱ,

Սուրբ Գեւորգ հունական ուղղափառ եկեղեցի, Ալթինոզու / Հաթայ նահանգ, ԹՈՒՐՔԻԱ,

Անտիոքի Երկաթե դարպաս, Անթաքիա / Հաթայ նահանգ, ԹՈՒՐՔԻԱ:

«Եվրոպա Նոստրայի» գործադիր նախագահ, դոկտոր-պրոֆեսոր Հերման Պարզինգերը հայտարարել է. «Ընտրված ժառանգության վայրերը վտանգված են քանդման, ոչ պատշաճ զարգացման, բնական աղետների կործանարար ազդեցության, անտեսման կամ ֆինանսավորման բացակայության պատճառով: Այս կարճ ցուցակը հրապարակելով՝ ցանկանում ենք աջակցության ուղերձ հղել այն ակտիվիստներին եւ տեղական համայնքներին, որոնք խորապես նվիրված են այս վայրերը փրկելուն: Եվրոպայի ժառանգությունը պետք է պահպանվի ոչ միայն որպես մեր ընդհանուր անցյալի վկայություն, այլ նաեւ որպես կայունության, համախմբված եւ խաղաղ ապագայի խթան:

Եվրոպական ներդրումային բանկի ինստիտուտի դեկան Շիվա Դուստդաայի խոսքով՝ Մշակութային ժառանգությունը եվրոպական ինքնության, գրավչության եւ տնտեսական աճի համար հիմնական ռեսուրս է:

«Այս կարճ ցուցակը մեզ հիշեցնում է, թե որքան փխրուն է այդ ժառանգությունը, եւ որքանով ենք մենք դա ընդունում: Ինստիտուտը մեր վաղեմի գործընկեր Եվրոպա Նոստրայի հետ միասին ողջ Եվրոպայում ընդլայնում է այն տեղական համայնքների ջանքերը, որոնք գիտեն, որ մշակութային ժառանգության վայրերը փրկելը կօգնի այլ հրատապ մարտահրավերներ հաղթահարելուն: Հույս ունենք գալիք սերունդների համար այս տեսարժան վայրերը վերականգնված եւ պահպանված տեսնել»,- ընդգծել է նա:

Հաղորդագրության մեջ նշվում է, որ վերոնշյալ վտանգված ժառանգության վայրերն ընտրվել են միջազգային խորհրդակցական խմբի կողմից: Խմբում ընդգրկված են պատմության, հնագիտության, ճարտարապետության, ամրակայման, նախագծերի վերլուծության եւ ֆինանսական փորձագետներ: 2024 թվականի «7 ամենավտանգված» ծրագրին վայրեր առաջադրել են անդամ կազմակերպությունները, ասոցացված կազմակերպությունները կամ Եվրոպա Նոստրայի առանձին անդամները, ինչպես նաեւ Եվրոպական ժառանգության դաշինքի անդամները:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ

Բռնցքամարտիկները նախապատրաստվում են Օլիմպիական խաղերի վարկանիշային մրցաշարերին:

Այս մասին հայտնում է Հայաստանի բռնցքամարտիկների ֆեդերացիան: Հայաստանի բռնցքամարտի տղամարդկանց եւ կանանց հավաքականները՝ Կարեն Աղամալյանի եւ Խաչիկ Խաչատրյանի գլխավորությամբ, ֆիզպատրաստության հավաք են սկսել Ծաղկաձորում, որը կտեւի մինչեւ փետրվարի 12-ը: Տղաների հավաքին մասնակցում է 24, իսկ կանանց հավաքին՝ 5 բռնցքամարտիկ:

Ծաղկաձորյան հավաքին կհետեւի եւս մեկ ուսումնամարզական հավաք արդեն Օլիմպավանում: Այս օրերին Հայաստանի եւս 4 բռնցքամարտիկ՝ Արթուր Մելքումյանի գլխավորությամբ, կմեկնի Բուլղարիա՝ մասնակցելու Ստրանջայի մրցաշարին:

ԿՐԿԻՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԹԻՄՈՒՄ

Հայաստանի բասկետբոլի տղամարդկանց թիմի նախկին անդամ Զարեհ Զարգարյանը կրկին հանդես կգա ազգային թիմում:

Այս մասին հայտնում է Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիան: Զարգարյանն այն բասկետբոլիստներից է, որը դեռեւս 2016 թվականին Հայաստանի բասկետբոլի հավաքականի կազմում հաղթել է փոքր երկրների Եվրոպայի առաջնությունում: Հայաստանի բասկետբոլի ազգային հավաքականը 2024 թվականի փետրվարին մեկնարկելու է աշխարհի 2027 թվականի առաջնության նախընտրական առաջին փուլում: C ենթախմբում Հայաստանի հավաքականի մրցակիցները լինելու են Ավստրիայի եւ Ալբանիայի թիմերը (22.02.2024 Ավստրիա-Հայաստան, 25.02.2024 Հայաստան-Ալբանիա, 24.11.2024 Հայաստան-Ավստրիա, 20.02.2025 Ալբանիա-Հայաստան):

Աշխարհի առաջնության նախընտրական փուլին մասնակցում է 10 հավաքական՝ ընդգրկված 3 ենթախմբերում: Հաջորդ փուլի ուղեգիր կնվաճեն ենթախմբերում առաջին հորիզոնականը զբաղեցրած թիմերը եւ երկրորդ հորիզոնականում հայտնված լավագույն արդյունքով հավաքականը:

ՋԻԴԱՆԸ՝ ԹԵԿՆԱԾՈՒ

Անգլիական «Լիվերպուլ»-ի գլխավոր մարզչի թեկնածուների շարքում է նաեւ ֆրանսիացի մասնագետ Զինեդին Զիդանը:

Այս մասին գրում են անգլիական ԶԼՄ-ները: Զիդանը, որը վերջին տարիներին չի զբաղվում մարզչական աշխատանքով, «Լիվերպուլ»-ի ղեկավարների ուշադրության կենտրոնում է: Ըստ պարբերականների՝ անգլիական ակումբի ներկայացուցիչներն արդեն կապ են հաստատել Զիդանի հետ:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ գերմանացի մասնագետ Յուրգեն Կլոպը մրցաշրջանի ավարտին կհեռանա «Լիվերպուլ»-ից: Կլոպն անգլիական «Լիվերպուլ»-ի գլխավոր մարզչի պաշտոնը ստանձնել էր 2015 թվականին: «Լիվերպուլ»-ում լինելու այս տարիների ընթացքում Կլոպն ակումբի հետ նվաճել է 10-ը տիտղոս: Նրա գլխավորությամբ թիմը դարձել է Չեմպիոնների լիգայի, Անգլիայի առաջնության գավաթի հաղթող եւ նվաճել է ՈՒԵՖԱ-ի Սուպերգավաթը, աշխարհի ակումբային առաջնության չեմպիոնի տիտղոսը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ

ՅՈՒՆԻԲԱՆԿ

Թողարկողի անվանումը՝ «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերություն: «Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից թողարկվող պարտատոմսերի հիմնական պայմանները	
Արժեթղթերի դասը	Անվանական արժեկտրոնային
Արժեթղթերի ձևը	Ոչ փաստաթղթային
Մեկ արժեթղթերի անվանական արժեքը	100 ԱՄՆ դոլար
Արժեթղթերի քանակը	50, 000 հատ
Մեկ թողարկման ընդհանուր ծավալ	5,000,000 ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային եկամուտ (պարտատոմսերի անվանական տոկոսադրույք)	Տարեկան 5%
Արժեկտրոնային եկամուտների վճարում	Եռամսյակային վճարումների պարբերականությամբ
Շրջանառության ժամկետ	36 ամիս
Երկրորդային շուկա	Հայաստանի Ֆոնդային Բորսա
Թողարկման ամսաթիվ	01.02.2024
Տեղաբաշխման ժամկետ	01.02.2024. – 15.03.2024թ.
Տեղաբաշխող	ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ
Կորպորատիվ պարտատոմսերը կարող եք ձեռքբերել «Յունիբանկ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ տեղաբաշխման ավարտից սկսած դրանք շրջանառվելու են երկրորդային շուկայում (ցուցակումից հետո) մասնավորապես Հայաստանի Ֆոնդային Բորսա ԲԲԸ ֆոնդային բորսայի առևտրային հարթակում:	
Պարտատոմսերը ձեռքբերելու համար անհրաժեշտ է արժեթղթերի և բանկային հաշիվներ բացել, համապատասխանաբար , «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ –ում և «Յունիբանկ» ԲԲԸ –ում: «Յունիբանկը» հանդիսանում է Հաշվի օպերատոր, հետևաբար բոլոր հաշիվները հնարավոր կլինի բացել հենց բանկում:	
«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ և երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:	
Պարտատոմսերի մարման ամսաթիվը	01.02.2027թ.

Ծանուցում

«Յունիբանկ» ԲԲԸ թողարկման պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը եւ պարտատոմսերի մարումը կիրականացվի հետեւյալ ժամանակացույցով.

Արժեկտրոնային եկամուտների առաջին վճարում՝ 01.05.2024 թ.

Արժեկտրոնային եկամուտների երկրորդ վճարում՝ 01.08.2024թ.

Արժեկտրոնային եկամուտների երրորդ վճարում՝ 01.11.2024թ.

Արժեկտրոնային եկամուտների չորրորդ վճարում՝ 01.02.2025թ.

Արժեկտրոնային եկամուտների հինգերորդ վճարում՝ 01.05.2025թ.

Արժեկտրոնային եկամուտների վեցերորդ վճարում՝ 01.08.2025թ.

Արժեկտրոնային եկամուտների յոթերորդ վճարում՝ 01.11.2025թ.

Արժեկտրոնային եկամուտների ութերորդ վճարում՝ 01.02.2026թ.

Արժեկտրոնային եկամուտների իններորդ վճարում՝ 01.05.2026թ.

Արժեկտրոնային եկամուտների տասներորդ վճարում՝01.08.2026թ.

Արժեկտրոնային եկամուտների տասնմեկերորդ վճարում՝ 01.11.2026թ.

Արժեկտրոնային եկամուտների տասներկուերորդ վճարում՝ 01.02.2027թ.:

Արժեկտրոնային եկամտի, ինչպես նաեւ մարման գումարը վճարվում է՝ վճարման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ կազմված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա, «Յունիբանկ» ԲԲԸ-ում պարտատոմսերի անվանական արժեքին հավասար գումարները ներդրողների բանկային համապատասխան հաշիվներին փոխանցելու միջոցով:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Տեղեկատու կենտրոն՝ + 374 10 59 55 55:

● *Փետրվարի 14-ին «Դվին» մյուզիք հոլում տեղի կունենա «Սիրուշո. ամենառոմանտիկ երեկոն» համերգը: Տոմսերի արժեքը՝40000-70000 դրամ: Սկիզբը՝ժամը 20:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող եմ ստանալ խաղատան կազմակերպման լիցենզիա:

Արտակ Համբարձումյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Խաղատան կազմակերպման լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին», «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի՝ ««Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 1164-Ն որոշման համաձայն: Խաղատան կազմակերպման լիցենզիան տրամադրվում է անժամկետ: Լիցենզիան տրամադրվում է նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում (լիազոր մարմնի որոշմամբ՝ կարող է երկարաձգվել եւս 23 աշխատանքային օրով)՝ վիճակախաղերի, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների լիցենզավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայտատուները խաղատան կազմակերպման լիցենզիա ստանալու համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն են ներկայացնում հայտը եւ փաստաթղթերը, որոնք կարող են ներկայացվել առձեռն, փոստով կամ էլեկտրոնային տարբերակով: Հայտատուները կարող են լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1283-Ն որոշման:

էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՄԻԳՐԱՑԻԱ

ՀԱՐՑ. Ապաստան հայցողների մասին տեղեկությունը գաղտնի՞ է:

Աննա Գալստյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստան հայցողների հայտնած տեղեկությունները գաղտնի են: Դրանք չեն հաղորդվում իրենց երկրների իշխանություններին՝ ներառյալ դեսպանատներին կամ որեւէ այլ անձի: Այդ տեղեկությունները այլ անձանց կարող են տրամադրվել միայն ապաստան հայցողի գրավոր համաձայնության դեպքում: Հարցազրույցի գաղտնիությունը երաշխավորված է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով:

«Փախստականների եւ ապաստանի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ապաստանի շնորհումը պետական մարմինների կողմից պետք է դիտարկվի Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների ներքո, եւ սույն օրենքի կամ ապաստանի եւ փախստականների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության այլ օրենսդրական ակտերի կիրառման ընթացքում որեւէ պարագայում չպետք է ապաստան հայցողի կամ փախստականի մասին տեղեկություններ փոխանակվեն նրա քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկրի իշխանությունների հետ:

ՀՀ ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետական մարմնի կողմից տեղեկատվության փոխանցումը զանգվածային լրատվական միջոցներին միջնորդավորված կերպով հանգեցնում է վերը նշված օրենքի խախտմանը, ուստի նման ցանկացած հայտ մերժվում է Միգրացիոն ծառայության կողմից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

ArmLur.am-ը բողոք է ստացել էջմիածին քաղաքի Մովսես Խորենացի 26 շենքի բնակիչներից: Նրանք պատմում են, որ բակում բանջարեղենի խանութի տնտեսվարողը առք եւ վաճառք է իրականացնում, որը հասնում է նաեւ փողոցի մայթին. «Դա համ օրենքով է արգելված, համ հակասանիտարական է: Հիմա էջմիածին քաղաքում նոր աղբամաններ են տեղադրել, դրանից 2-ը արդեն տեղադրված են հենց իրենց ապրանքի կողքին, այսինքն՝ ժողովուրդը սնվում է հենց աղբամանի կողքից»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-14 - 18 - 3 - 7
Կոտայքի լեռներ	- 14 - 17 - 3 - 6
Կոտայքի նախալեռներ	- 6 - 8 0 + 2
Գեղարքունիք	- 13 - 17 - 2 - 4
Լոռի	- 8 - 13 - 1 + 2
Տավուշ	- 3 - 7 - 1 + 5
Արագածոտնի լեռներ	- 13 - 13 - 3 - 6
Արագածոտնի նախալեռներ	- 6 - 8 0 + 3

Արարատ	- 4 - 7 + 3 + 5
Արմավիր	- 4 - 7 + 3 + 5
Վայոց ձորի լեռներ	- 13 - 16 - 3 - 6
Վայոց ձորի նախալեռներ	- 4 - 7 + 3 + 5
Սյունիքի հովիտներ	- 3 - 7 + 1 + 4
Սյունիքի նախալեռներ	- 9 - 12 0 - 3
ԼՂՀ	- 9 - 10 0 - 4
Երեւան	0 - 1 0 + 3

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **31.1.2024**
Հասցեն՝ Գերաքունիքի մարզ, ք. Վարդենիս, վ. Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*